Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 27 ՄԱՐՏ 1899 — ԹԻՒ 115

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղիարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

—)(—

Գրութիւնք ետ չեն տրուիր

—)(—

Ծանուցման տողը 20 սանտիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կը շնորհուի։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՍՈՎ ԵՒ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Ա.

Ռուսաստանում կրկին սով է։ Մեծ ու կենսատու է ռուսական «Մայր-Վոլգա» գետը։ Նա երկրագործ երկրին հոգի ներշնչողն է։ Նրա ափերի նահանգները Ռուսիայի ամենաբարեբեր դաշտերն են։

Բայց, տարօրինա՜կ դիպուած, այդ իսկ նահանգներն են այսօր սովի ծանրութեան տակ տնքացողները։

Պերմի, Ուֆայի, Վեատկայի, Կազանի, Սամարայի, Սարատովի, Վարոնէժի, Տուլայի, Բեզանի, Սիմբիրսկի և Տամբովի հսկայական դաշտերը հրաժարւում են կերակրել իրենց հարազատ զաւակ ռուս «մուժիկին»։

Բարեբեր ու հացառատ է մայր հողը։

Աշխատասէր ու սակաւապէտ է ռուս գիւղացին։

Ցարին տասներկու ամիս վազում է «մուժիկի» քրտինքը հեղեղի նման, վազում, ոռոգում է մայր-երկիրը։

Իսկ մայր-երկիրն ապերախտ չէ. լիաբուռն կերպով վարձատրում է նա իր սիրասուն երկրագործի քրտնաթոր աշխատանքը։

Ուրեմն ինչո՞ւ է այսօր անօթի հողի սիրական զաւակը։

* * *

«Աշխատանքդ տո՛ւր», ասում է ռամկին ճերմակ ցարը։

«Աշխատանքդ տո՛ւր», արձագանգ է տալիս հոգեւորականը, ամէն տեսակ բռնակալութեան այդ զօրեղ նեցուկն ու սրբապօծողը։

«Աշխատանքդ տո՛ւր», բիւրաւոր կողմերից կրկնում են հողատէրն ու դրամատէրը, ոստիկան ու ծառայողը...

Մէկը հողի հարկ է, միւսը տան, երրորդը ճանապարհի, ծխախոտի եայլն, եայլն։

Հապա կաշառքը, հապա հոգեւորականի հասոյթնե՞րը...

Հողը խիստ առատ է տալիս, բայց բռնակալութեան պէտքերը անվերջ ու անսահման են։

Ամէնաառատ տարին անգամ խեղճ գիւղացին հազիւ է ծայրը ծայրին հասցնում։

Իսկ երբ հունձքը փոքր ինչ անբաւարար է լինում՝ գիւղացու տնտեսութեան ձգուած թելը կըտրւում է և սովը ցցում իր ճիրանները երկրագործի սրտում։

Ոչի՛նչ չեն թողնում գիւղացու մօտ աւելորդ, որ նա սակաւ տարին պահեստ ունենայ, նրանով ապրի մի կերպ։

* * *

Տո՜ւր, անվե՛րջ տուր, կրկնում է բռնակալը։

Եւ այդ բոլոր առածը գործ է դնում իր բանակների, իր բազմաթիւ ու բազմատեսակ ծառայողների վրայ, որովհետեւ նրանք են իր գոյութեան սիւները։

Ցարի զինւորական բիւջէն կըլանում է 1275 միլիոն ֆրանք, իսկ ծովածաւալ երկրագործ կայսրութեան գիւղատնտեսական բոլոր կարիքների ու սովի պատահարների դէմ կռուելու համար ծախսւում է միայն 112 միլիոն ֆրանք...

Ցարի պալատի, լրտեսական ահագին բանակի, գրաքննութեան, հոգեւորականութեան հըրէշաւոր ծախքերը կլանում են միլեարդներ,... իսկ այդ ամէնը դուրս է գալիս ոգէտ ռամկի գրպանից։

Եւ արդիւնքը պարզ է, այսօր նա ցցուած է մեր առաջ իր բոլոր զզուելի մերկութեամբ։

11 նահանգ, մօտ 12 անգամ աւելի մեծ տարածութիւն քան Բուլղարիան, Եւրոպական Ռուսիայի ամբողջ մէկ երրորդ մասը, 26 միլիոն ժողովրդով՝ սովի սոսկալի ճանկերում գալարւում են։

Գիւղացին ծախել է բոլոր իր կահ-կարասին, խրճիթը, անասունները...

Ստամոքսը խաբելու համար խոզկալին, դարման, փիթած փայտ է մանրացնում և մի բուռ ալիւրի հետ խառնում, հաց թըխում ու կերակրւում...

Վարակիչ հիւանդութիւնները վխտում են ամէն տեղ. մահւան գերանդին առատ հունձ է անում։

Թշուառութիւնն աննկարագրելի է։

* * *

Զէր ընկճուի ռուս «մուժիկը», չէր վրդովուի ռուս լուսամիտ դասը, չէր սոսկայ ամբողջ Եւրոպան, եթէ դա լինէր մի բացառիկ երեւոյթ։

Ո՜չ. սովը Ռուսիայի համար մի պարբերական ցաւ է։ Նա կրկնւում է ամէն 5-6 տարին մի անգամ։

Նա մերթ երեւում է հիւսիսային նահանգներում, մերթ վարակում է միջին նահանգները։

Այսօր նա տանջում է 4-5 նահանգ, վաղը կոտորում ահագին տարածութիւններ։

91-92 թուերի սոսկալի սովի ժամանակ ամբողջ լուսաւոր մարդկութիւնը օգնութեան ձեռք կառկառեց սովատանջներին։

Անգլիայում, Ֆրանսիայում ահագին հանգանակութիւններ եղան։ Միացեալ-Նահանգներից միլիոնաւոր պարկերով ցորեն ու ալիւր ուղարկուեցաւ։

Այս անգամ էլ դուցէ լուսաւոր աշխարհը օգնութեան հասնի...

Բայց այդ ամէնը անկարող են ցաւը արմատից բուժել, սովի աղբիւրը կտրել։

Այս անգամ էլ ռուս զարգացած դասը գործ կը դնի իր հերոսական բնաւորութեան յատուկ բոլոր դերմարդկային ջանքերը...

Ի՜զուր, ի՜զուր...

* * *

Կոկորդիլոսի արցունքներ է թափում բռնակալութիւնը սովի դիմաց։

Նա ջանքեր է անում իբր թէ օգնութեան հասնելու։

Ժողովրդից ա՞յնքան անխղճօրէն խլած հարստութեան մի քանի կաթիլներն իբր «ողորմութիւն» բաժանում է՝ իր ձեռքով սովամահի դուռը հասցրած գիւղացիներին։

Զարմա՞նք բան. կարծես բռնակալը չի ըմբռնում, որ սովն ի՛ր գործն է, իր սեփական՝ զաւակը...

Նախ թալանում է ռամկի ունեցածը, խլում նրա աշխատող մատաղ ուժերը իբր զինւոր, թողնում ամբողջ ժողովուրդը տգիտութեան անթափանց խաւարի մէջ... սով ու թշուառութիւն ծնեցնում եւ ապա ջանքեր է անում իբր թէ օգնութեան հասնելու...

* * *

Այդպէ՛ս է վարւում հիւսիսի ճերմակ բռնակալը սովի դէպքում. տեսնենք, թէ ի՞նչ է անում հարաւի կարմիր բռնակալը Բոսֆորի ափերից։

ԳԱՍՊԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

—

Լոնտոնէն ժուրնալ-տը-ժընէվին կը գրեն հետեւեալը.

Հայաստանէն հոս հասած տեղեկութիւնները հետզհետէ աւելի սրտաճմլիկ կերպարանք կառնեն։ Թրքական հալածանքը երբէք դադրած չէ. ընդհակառակը օրէ օր կը սաստկանայ և կաճի։ Այդ դժբաղդ երկրին մէջ անցեալի անթիւ մարտիրոսներուն վրայ կաւելնան նորեր։ Աչքիս առջեւ ունեցած պաշտօնական տեղեկութիւններէս կը տեսնեմ թէ այս վայրկեանիս եօթանասուն հազար հայ—այր, կին ու տղայ՝ բարեգործական հաստատութիւններու և Եւրոպացի միսիոնարներու ողորմութիւնովը կապրին։

95 թուականին քանի մը մարդասէրներու նախաձեռնութիւնովը բացուած էին տասնի չափ օրբանոցներ, ուր Եւրոպացիներու հոկողութեան տակ ապաստանած էին մորթուած հայաստանցիներու որբերուն մէկ մասը։ Սակայն այսօր այդ բոլորը փակուած են գաղանային անխղճութեամբ մը։

Ցաճիկ կառավարութիւնը իր հայաջինջ ձգտումներուն մէջ այնքան առաջ կերթայ, որ օրբանոցներու Եւրոպացի կառավարիչներն իսկ կարտաքսէ Հայաստանէն, և այս վայրկենիս փոքրիկ մանուկներ՝ անօթի ծարաւ, մերկ ու բոպիկ կը թափառին դժբաղդ Հայաստանի ամէն կողմը, որու ամէն մատ հողը ողողուած է Սուլթանական վայրենի մոլեռանդու-

Թեան զոհ գացած հայ քաջերու արիւնով։

Եալուի, Տիգրանակերտի Զէյթունի ճամբայները ծածկուած են անմեղ մանուկներու դիակներով, որոնք կը մեռնին պատառ մը հացէ զուրկ՝ սոսկալի կացութեան մը մատնուած։ Թուրք կառավարութիւնը այդ մատաղ սերունդը բաց երկնքին տակ ոչընչացնելու համար կը հրամայէ ալրել բոլոր ապաստանարանները։ Եւ այդ բոլորը անոր համար՝ որ անոնք հայու անուն կը կրեն և անոնց հայրերը բողոքեցին Թրքական անիրաւութիւններուդէմ։

Լորա Օպլղպրիի Պոլսոյ դեսպան Մ. Օ'Կոնորէն ստացած պաշտօնական հեռագիրները կը հաստատեն Հայաստանէն եկած մասնաւոր նամակներու մէջ գրուածները։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս, 22 Մարտ

Կիրակի օրուան կուիէն յետոյ, յեսապիմականները մեծ ուրախութեան մէջ էին։ Կը պարծենային թէ զանազան մեքենայութիւններով պիտի յաջողին ամէն բանի մէջ։ Զերբակալուած էին վեց անձեր, ամբաստանուած էին ուրիշներ իբր խռովարարներ, «Ղայրէթ»ի մէջ անիշխանական հաչակել տուած էին, թիւրք հիւպատոսին միջնորդութիւնը փընտրուած էր։ Վերջապէս հաղարտեսակ ստորին միջոցներով կը ջանային յաղթանակը տանիլ։ դէմքերը պայծառացած էին։

Բայց իրենց ուրախութիւնը կարճատեւ եղաւ։ Բանտարկեալ վեց անձերէն երիքը ազատուցան կարճ ժամանակի մէջ։ Զորս նշանաւոր պուլկար և հայ փաստաբաններ ինքնաբերաբար իրենց վրայ առին բանտարկուածներուն դատը և որովհետեւ կը կարծեն թէ վարդապետականները կանխապատրաստութեամբ հաւաքած էին ամբոխը և բիրեր, զէնքեր ու երկաթներ բաժնած էին, յեսապիմականներու վիճակը շատ խղճալի պիտի ըլլայ դատարանին առջեւ և ծանր վերջ պիտի ունենայ։

Սակայն պարտութիւնը կատարեալ եղաւ, երբ ուրբաթ օր ոստիկանապետը Արսէն վարդապետի երթալով՝ հրամայեց որ անմիջապէս մեկնի եկեղեցիէն։ Տեսնելու բան էր յեսապիմականներու շփոթութիւնը և գործունէութիւնը։ Վեր վար կը վազէին. հեռագիր կը քաշէին. այլ ամէն ինչ անօգուտ էր։ Արսէն վարդապետ իր խուցին մէջ բանտարկեց կառավարութիւնը և երիու ոստիկաններ դրան առջեւ կանգնած դադրեցուցին ամէն յարաբերութիւն։ Կիմանանք թէ այսօր ոստիկանութեան հսկողութեան տակ կը մեկնի քաղաքէն։

Իբրեւ լրումն ամենայնի, կրսուի թէ Պատրիարքարանէն հեռագիր մը եկած է Տ. Սարգիս քահանային և Արսէն վարդապետին թէ այս վերջինը զրկուած է բոլոր եկեղեցական և կրօնական առանձնաշնորհումներէ։ Եթէ չեմ սխալիր. ասկը նշանակէ թէ Արսէն վարդապետ առժամեայ փիլոնաշրկութեան մատնուած է։

Խե՜ղճ ազգ։ Երբ անդին Մայր Հայրենիքի մէջ հաղարաւոր հայեր անօթի կը մեռնին և ստրկութեան բեռին տակ կը հեծեն, Արսէն վարդապետի նման արարած մը կարող կըլլայ ամիսներով և տարիներով զբաղեցնել պուլկարահայ գաղթականութիւնը։

* * *

Շուտկա, 21 Մարտ

«Իրաւունք»ի 20 թիւին մէջ կարդացի իմ անձիս նկատմամբ հետեւեալ տողերը. «Խաչիկ Մարտիրոսեանի մեր թերթին հաստիքները տուող ազգայնոց կը ծանուցանենք թէ՝ այդ պարոնը իրեն յանձնարարութիւնը գործադրած չէ, այլ անգամ մը խմբագրատան դրան մէջ երեւցած ու մէկ քանի նոր բաժանորդներու հասցէներ ձեզ պիտի տամ ըսելէ վերջ անյայտացած է»։

Վառնա եկած տեղս ներկայացայ խմբագրատունդ և մտադիր էի մարդասիրաբար նոր բաժանորդներու մի քանի հասցէներ տալ ձեզի, սակայն ցաւ է ինձ յայտնել թէ՝ խմբագրատանդ մէջ, ձեր իսկ ներկայութեան, պարոնի մը կողմէն (զոր բարեբախտաբար ճանչնալու պատիւը չեմ ունեցած, և որ թերեւս ձեր խմբագրատան գործոն անդամներէն մէկը ըլլայ) բացուած անսեղի խօսակցութիւն մը ի սա այնքան զէշ տպաւորութիւն մը թողուց, որ ստիպուեցայ մեծաք բարով ըսել և մեկնիլ, առանց սակայն չզղջալու մտադրութիւնս չի կատարելու մասին. և կարծեմ պարտաւոր չէի ձեզի նոր հասցէներ տալ, քանի որ ձեր գործակատարը չէի։

Ցաւ խմբագիր «Իրաւունք»ը ըլլայ, թէ ինչ շահ ունիք այս տեսակ իրողութիւն մը հրապարակաւ խեղաթիւրելու մէջ, զայս չի կրցի երբէք ըմբռնել։

Ձեզի նման խմբագիրներու վրայ մարդ միայն արգահատանք կրնայ և կարժէ արդեօ՞ք ձեր գրչին արտադրութեանց համար մէկ քանի վայրկեան աչք յոգնեցնել։

Պէտք չեմ գրել այլեւս ձեզմով զբաղիլ ինչ որ ալ գրէք։

Խաչիկ Մարտիրոսեան

Սիլիստրէ, 11 Մարտ

«Արժումի 109 թիւին մէջ՝ պատահական թղթակիցմը, «Քանակ», խեղաթիւրած էր Վարդանանց հանդէսին օրը քաղաքիս ազգային վարժարանին մէջ պատահած փոքրիկ միջադէպը։

«Քանակ» չորս հինգ խաչոր սուտեր գլուորած է, սուտեր՝ որոնք յերիւրուած են լոկ անձնական դէուռ հաշիւներու թելադրութեամբ և ստենախօսուսուցչին վարկը կոտրելու բացուրոյ չարակամութեամբ։

1. Կը ստէ Քանակ՝ ըսելով թէ այս տարի ալ, անցեալ տարուան պէս, անպատշաճ կոչներ եղած են։ — Բացի Պ. Նահապետեանի լուրջ ընդդիմախօսութենէն և Ատանիկեանի մը անվայել հակաճառութենէն՝ կոիւ չէ եղած բնաւ հանդիսավայրին մէջ։

2. Քանակ ստատ կը խօսի՝ յայտնելով որ ատենախօս ուսուցիչը հարուածած է անիսիր Վարդանն ու իր հետեւորդները, պանոնք յիմար, ազգին ՊՕԱՍԿԱՐ գոնելով։ Այսպիսի խօսքեր՝ Քանակ իր զառանցանքին մէջ լսած ըլլալու է։

3. Քանակ ձրի խօսքեր կը շինէ, երբ կրսէ թէ հանդիսականներուն մէջերը գրգռուեցան վատակապաշտ ճառէն։ — Ընդհակառակը, Սիլիսարէի հայերը, կանխակալ կարծիքէ և նախապաշարումէ ղերծ մարդիկ, մտիկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԽԱԼ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐ

Իրաւունքի անցեալ տարուան թիւ 84ի թրքական բաժնին մէջ ազգային փափուկ խնդիր մը չօշափուած էր։ Այդ տողերէն կը հասկցուէր որ՝ Եարբմեան—Վանգն վիճաբանութեան մը մէջ՝ Պատ. Հայկ Եարբմեան՝ «Բողոքականներս ալ հայ ենք» ըսած է, եւ Պ. Վանգն, կերեւի, ատոր հակառակը պնդել ուզած է։ Իրաւունքի այն ատենուան խմբագրութիւնը՝ ասանկ կենսական խնդրոյ մը առջեւ՝ վիճաբանութիւնը կուզէր փակել, իր կողմէն համառօտ խորհրդածութեամբ մը, որ կամփոփուի հետեւեալ թարգմանուած տողերուն մէջ, «ըստ որում քաղաքական իշխանութիւն մը չունինք մեր ազգային գոյութիւնն ապահովող, հայութիւնը հաստատ պահողը մեր ազգային եկեղեցին միայն եղած է ու պիտի ըլլայ։ Այսօր հայ պապականներուն կէսը՝ իր ազգութիւնը կորուսած չէ՞ միթէ։ Անոնք ալ ատենօք «մե՛նք ալ հայ ենք» կըսէին, բայց այսօր, ազգային լեզուն չխօսելնին մեկդի, իրենց լատինական ու ֆրանսական գոյներ տալով՝ եղուիտ քահանաներուն դիրկը նետուած են բոլորովին։ Տեսա՞ք, թէ կրոնքը ի՞նչպէս ազգը կը բաժնէ»։

Դէպ փութամ յայտնել որ այս արբամբասանական հիմունքէ զուրկ (կըսենք ու պիտի փաստենք), վճիռը՝ զարգացած հայ դասակարգին խորին ցաւ եւ ամաչութիւն պիտի պատճառէ. իսկ չզարգացած միջամտութեան մէջ՝ այս եւ նման քարոզութիւններ՝ եղբայրասպանութեան սերմեր ցանելու միայն պիտի ծառայեն։

Ասանկ բաւական ընդհանրացած սխալ ըմբռնումի մը ազդեցութեան հետեւանքներուն առջեւ չկրնալով անտարբեր մնալ՝ մեզի ազգային պարտք մը կը սեպնենք հրապարակ հանել հետեւեալ տողերը, որոնց նպատակը պիտի ըլլայ հաստատել թէ՝ 1. Այլադաւան հայերը են ու կը մնան մի՛ւռ հայ. թէ՝ 2. Մեր ազգային գոյութիւնը պահպանողը այլ եւս միայն հայ եկեղեցին չէ։ — Այս առթիւ, իմարկէ, պիտի չօշափենք նիւթին յարակից այնպիսի խնդիրներ, որոնք՝ իրենց կարգին՝ ա՛յնքան ծառայած են ներկայ սխալ ըմբռնումն արմատացնելու։

Խօսինք առ այժմ միայն բողոքականներու մասին։ Թողնենք որ չափելի փաստերը՝ իրե՛նք խօսին։ — Թուրքը հայ ազգին գէմ հանեց անլուր հալածանք, հուր, սուր, կոտորած։ Մեր արիւնարբու թշնամին այս աղէտներու միջոցին ոչ մէկ խարութիւն չդրաւ լուսաւորչականի եւ բողոքականի միջեւ։ Լուս. քահանային ու բող. քարոզչին արիւնը իրարու խառնուեցան. վարդապետին ու երէցին յօշոտուած դիակներն իրարու վրայ նետուեցան, ու միեւնոյն հողը ծածկեց անոնց հովուած ժողովուրդները։ Բանտերու եւ աքսորավայրերու մէջ ալ նոյն եղբայրական ներդաշնակութիւնը։ Եղնիկ եպիսկոպոսի դիմաց՝ ծերունազարդ պատ. Գրիգորեան, Խարախանեան վարդապետի դիմաց՝ պատ. Աբրահամ, Դանիէլ վարդապետի քով՝ պատ. Մարտիրոս. Լուս. ուսուցիչ՝ Կարոյի եւ Շաւարշի շղթայակից Թումայեան եւ Գայայեան, իրենց աշակերտներուն խմբակովը հանդերձ. կախաղան բարձրացող լուս. անմահ Թորոսին դիմաց՝ Ամասիոյ բանտին մէջ Թունաւորուած մընէ (Յարութիւն Թումայեան), բողոքական մը, հերոսներուն հերոսը, որուն չատ բան կը պարտի Փոքր Հայքի ազգային շարժումը։ Զուանը վզին հերոսօրէն անչնչացած լուս. Կիւլպէնկի դիմաց կուզայ գոլգեթական Միհրան Ամասիացի բողոքական) մը, տապտակի մահով նահատակուած։ Միւնակներով կրնայինք երկարել այս տխուր, սակայն գեղեցիկ, խրախուսիչ չարքը. բայց յայտնի իրողութիւններ միայն կրկնած պիտի ըլլանք։ Զարթեցնողութիւն ըրած կըլլանք արդեօք, եթէ համարձակինք ըսել թէ՝ Թուրքիոյ բանտերուն եւ աքսորավայրերուն մէջ բող. հայերուն թիւը՝ իրենց ամբողջական թուոյն համեմատական ըլլալէ ծափահարելի կերպով բարձր է։ Յեղափոխական գրեթէ բոլոր կազմակերպութեանց մէջ գտնուեցան բողոքական ներկայացուցիչներ, որոնք հաւատարմութեան ու անձնուիրութեան կողմանէ յեսիները չեղան արդարեւ։ Ան այս կրնան վկայել թէ Շեմաւոններ, Վարդոներ, Ռշտունիներ, Բագարաններ եւ այլն։ Այս առթիւ ներուի մեզի յայտնել, որ Փոքր Հայքի եւ անատոլեան մի քանի նահանգներու մէջ յեղ. շարժումի ծնողներ բող. մարդիկ եղան։ Դեռ արտասահմանէն գործիչներ ներս չմտած՝ անոնք ունէին ներքին ու արտաքին օրինակելի կազմակերպութիւն մը։ 1896ի պարտիզ Զէյթունի առաջին նպաստը հասցնելու խորհուրդն յղացող ու գործադրողները, Ա. քաղաքի բող. կիներն եղան։ Բայց ինչո՞ւ երկա-

ըրին բանախօսութիւն մը որ Վասակն ու Վարդանը միանգամայն կը ներկայացնէր։

4. Բացարձակ սուտ է և Քանակի սա խօսքը թէ՝ քանի մը անձեր յայտներ են որ կարդը խռովողը իսկոյն կարտաքսուի։ — Ինչպէս ըսինք՝ կռիւ, անկարգութիւն չեղաւ բնաւ, հեռաւպէս՝ խիստ միջոցներ ալ ձեռք չառնուեցան։

5. Յատկանշանական, Քանակավայել սուտ մըն է նաև՝ ըսել թէ ուսուցիչը չյարգելով ժողովուրդին զգայունները, կրկին սկսած է իր վատակապաշտ ճառը։

Խղճի պարտք կը համարիմ յայտնել թէ ուսուցիչը, իբր անձնական կարծիքի տէր մարդ, գովեց Վասակը՝ քրիստոնէութեան օգտակար և իր հայրենիքին ոտատ գտնելով զայն՝ Եղիշէին իսկ վկայութեամբ, որ իր գործը յորինած է Վարդանանց պատերազմէն ետքը։

Ատենախօսը Վարդանը կոչեց «քաջութեան մարմնացում» և Վասակը «վարչապետ միտք», բուռ թէ անոնք երկու մեծ ուժերէին, որոնք զիրար պիտի ամբողջացնէին և որոնք սակայն չկրցան զիրար հասկնալ կարգ մը մելեռանդ սեւագլուխներու արդելարիթ միջամտութեամբը, որ Վարդանեանները մղեց ձախող կռիւի մը։

Ա՛ս է ահա ուսուցչին ճարին համառօտութիւնը՝ ինչ որ չենթադրեր ոչ յատակապաշտութիւն ոչ ալ Վարդանատեցութիւն։

Կեղծ-հայրենասիրութենէ շատվե՞ր են ճշմարտութիւնն ու քընադատութիւնը, «պատմութիւնը չիմիի պէս դիտութիւն մրն է» կըսէ Ռընան։

Դանակ

ՆՅՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաղ. Խորհուրդս հրապարակաւ կուգայ իր խորին շնորհակալութիւնը յայտնել առ Մեծապատիւ եղբարք Սահակեան և Սուրիշմէղեան, արք սիրայօժար նուիրած են քաղաքիս Ս. Սարգիսեանոս եկեղեցւոյն 12 ոսկի արժողութեամբ մի փառաւոր արծաթեայ աշտանակ։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ հայոց Սլիվէնի

Ատենադպիր Ատենապետ
Ս. Պ. Ունճեան Յովսէփ Թազորեան
Սլիվէն, 21 Մարտ 99

ՔՐՈՆԻԿ

—

«Նարժումի» ուղղուած քանի մը հեռագիրներ նորօրինակ լուր մը կը հաղորդեն Ռուսչուքի ազգային վարժարանի մասին։ Աշակերտ մը դասարանի մէջ՝ ուսուցիչներու ներկայութեան՝ զմեւլով վիրաւորած է ուրիշ աշակերտ մը երեք տեղէն։ Վէրքերը բաւական վտանգաւոր ըլլալով, վիրաւորեալը փոխադրուած է հիւանդանոց։

Խնդիրը աւելի լուսաբանելու համար կը սպասենք թղթակցութիւններու։

— Ուշիի մէջ բարեգործական ընկերութեան դրագարանի տասնամեակը լրացեր է ներկայ մարտ 10ին։ Այդ տասնամեայ շրջանին մէջ դրագարանը ձեռք բերած է 4917 հատոր գիրք հայերէն և ռուսերէն, 6793 բուպլի արժողութեամբ. 720 բուպլիի կահկարասի և այժմ կստանայ 30 պարբերական թերթեր։

— Կովկասեան հայոց բարեգործական ընկերութիւնը կանոնադրութեան նոր ծրագիր մը ընդուներ է։

— Բենթերուտիկի լրագիրները դրածին նայելով՝ մոռադրութիւն կայ Խրիմի քաղաքներէն էֆկոն մէջ գիւղաբնակական վարժարան մը հիմնել, նշանաւոր հայ նկարիչ Այվազովսքիի 60ամեայ յօբելեանը յաւերժացնելու համար։

— Հաստատ աղբիւրէ կիմանանք որ Շումլաի Թաղ. Խորհուրդը գրած է Պատրիարքարան, որպէս զի Արսէն վարդապետը հոն չի ղրկուի. քանի որ արդէն առնոր համը առած են. հակառակ պարագայիին, կառավարութեան միջոցով ետ պիտի ղրկեն։

— Պ. Վ. Սվաճեան մարտ 16ին առաջին նուագահանդէս մը տուեր է Թիֆլիզի մէջ, որ շատ յաջող կերպով անցեր է։ Պ. Սվաճեան մեկներ է Բագու այնտեղ ալ նուագահանդէս տալու համար։

— Թաւրէզէն կը գրեն Մշակին, Արարատեանի առաջնորդ Սահակ Եպիսկ. Այվազեան, Սալմասի և Ուրմիոյ պարսիկ պաշտօնեաներու կողմէ կատարուած անվերջ և անխիղճ կեղեքումներու դէմ տեղական կառավարութեան ապարդիւն բողոքներ տալէն յետոյ, յուսահատուած գրաւոր խիստ բողոքագրեր ղրկեց Թէհրան սատրազամին և արտաքին գործոց նախարարին։

— Ինպատ Հայկական Կրթարանի յառաջիկայ չորեքշաբթի գիշեր, Մարտ 31ին, թատերական շքեղ ներկայացում մը պիտի տրուի Անկէլ Սլավօֆի սրահին մէջ։ Ներկայացուելիք խաղն է Վ. Հիւկօի «Անճէլօ Մալէբիէրի», որուն պիտի յաջորդէ կատակերգութիւն մը։

——).(——

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Նուվօ Խան» թերթի ըսածին նայելով, Թուրք լառավարութիւնը վճռեր է վերջապէս Մակեդոնիոյ մէջ ներմուծել ա՛յնքան երկար սպասուած բարենորոգումները։

Երա՞նի հատուցելոյ . . .

— Բ. Դուռը աւստրիական առեւտրական տան մը յանձնարարած է Թոփհանէի զինարանին համար անհրաժեշտ եղող գործիքներն ու մեքենաները պատրաստել ու տեղաւորել. այդ մեքենաներով Պոլսոյ մէջ պիտի պատրաստուին Մաւզէրեան հրացանները։

Փա՞ռք Աստծու . . . վերջապէս Բ. Դուռը կը յանդգնի իր հպատակներէն ծնած դրամներուն մէկ մասն ալ Գերմանիայէն տարբեր տեղ մը — Աւստրիայ ուղարկել։

Սրգիօք սեւ կատո՞ւ է անցեր երկու մեծ բարեկամներու մէջէն։

— Մարտ 18 թուականով Պոլսէն կը հեռագրեն «Թանին» թէ Բ. Դուռը Անգլիոյ և Ֆրանսայի դեսպաններուն ղրկած մէկ ծանուցագրով կը բողոքէ անգլօ-ֆրանսական դաշնագրին դէմ։ Դուռը կը յայտնէ. որ Անգլիոյ կողմէն Ֆրանսայի թողուած Ինթերլանտի հողերը կը պատկանին իրեն և ուրիշը ոեւէ իրաւունք չունի տիրանալու։

Օհ՞ա, սաճիին ալ կը հասկնայ եղեր «իրաւունք» . . .

— Պերլին և Վիէննա նստած քաղաքագէտներու ուշադրութիւնը լարուած է. նոր երեւոյթ մը անհանգիստ կընէ զիրենք։

Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը վճռած է ժշտաֆրէնկ կոչուիլ կը սիրեն, տխուր է անշուշտ այս երեւոյթը. բայց անոր վերլուծումը մէկէ աւելի մխիթարութեան նշոյլներ պիտի ընծայէ մեզի։ Կաթոլիկ հայերը լատինասիրութեան կամ ֆրանսամոլութեան մղող պատճառները, ը. ա մեզ, պապերու միջնադարեան լայնածիր ազդեցութեան և Նաբոլէոններու Ֆրանսային ձեռք բերած քաղաքական հրապուրիչ յաջողութեանց վերագրելի են յաւէտ։ Նաբոլէոն Գ. ի ազդեցիկ միջամտութեամբ երբ Լիբանանու քրիստոնեաները յարաբերական ազատութիւն վայելեցին. Սուրիոյ, Կիլիկիոյ և գրեթէ համօրէն Փոքր Ասիոյ քարերն անգամ կարծես կը ցանկային «ֆրէնկ» ըլլալ։ Բայց այսօրուան Ֆրանսան երեկինը չէ. և վաղուանն ալ, որքան կարելի է չարագուշակ երեւոյթներէն դատել, այսօրուանէն աւելի մխիթարական պիտի չըլլայ։ Գալով պապերու երբեմնի լայնածաւալ ազդեցութեան, ուրախ ենք տեսնելու որ անիկա պզտիկցած, ճղճիմ ազգերու միայն վերածուած է այսօր։ Իսկ վաղը . . . հա՛, վաղը — վաղուան տէրը ազատութիւնն է։ Եւ արդէն այսօր իսկ զարգացած կաթոլիկ հայ երիտասարդներու մէջ կրնանք հանդիպիլ անանկներու՝ որ լատին կամ ֆրէնկ կոչուիլ իրենց ոչ միայն պատիւ պիտի չսեպեն, այլ ամօթանք։ Մեր կաթոլիկ եղբայրները ազգին տուին «Հայրունին», երգող Ալիշանը, թրթռուն Գէչիքթաշլեանը եւ նմաններ, հայ գիտնականներու ջուխտակ կաճառը, ըմբոստ Քիւրէլեաններ, ազդանուէր Տամատեաններ եւայլն։ Վազը գեղեցիկ անակնկալներու օր է։ Մենք պատմութեան մէջ միջադէպեր կազմող երեւոյթներու վրայ չյուսահատինք եւ այդ երեւոյթներուն ոչնչեւ պարզ հանդիսատեսներու կամ առ առաւելն օգնականներու դերը չըստանձնենք։ Ազգային բունէն մոլորելու վտանգին մէջ գտնուող մեր կաթոլիկ եղբայրը սիրով համոզենք, որ դաւանանքի տարբերութիւնն երբէք պատճառ մը չէ որ մենք զիրար ազգակից, եղբայրակից չճանչնանք։ Այլապէս հայերուն միջեւ տիրող սառնութեան պատասխանատուութիւնը բոլորիս վրայ ալ կը ծանրանայ։ Մէկը եթէ լուս. եկեղեցին թողով կաթոլիկութիւնը դաւանի, տակտամամ հայեր՝ այն օրէն սկսելով կը դադրին զայն իրենց եղբայրակիցը նկատելէ։ Դրսեցի կաթոլիկ կղերին գործին կուգայ որ իր նոր յաճախորդը՝ ոչ միայն հայ եկեղեցւոյն, այլ նաեւ հայ՝ մայր բունին իր վերջին «հրա-

կան ցուցահանդէսներ հիմնել ամերիկեան ապրանքներու համար Թուրքիոյ զանազան կեդրոններու մէջ։

Միսիոնարներու թիւը կը շատնայ։ Ատոնք կը պատրաստեն իրենց հայրենի վաճառականութեան համար յարմար անձեր տեղացիներէն։

—Մարտ 21ին Պոլսէն «Թան»ին կը հեռագրեն հետեւեալը։

Ռուսական դեսպանը Բ. Դրան ծանուցագիր մը ներկայացուցեր է, հրաւիրելով Թուրք կառավարութեան ուշադրութիւնը քիւրտ աւազակներու վրայ, որ Կովկասի ռուսական սահմանն անցնելով, կը մտնեն Սուրմալուի նահանգը, կը քշեն կը տանին անասուններ եւ կը հրդեհեն խրճիթները։ Եթէ Դուռը միջոցներ ձեռք չառնէ այս անհանդուրժելի կացութիւնը դարմանելու համար, Ռուսիան իր վրայ կառնէ քիւրտերը զսպելը։

—Օսմանեան դրամատան Բարիզի և Լոնտրայի մասնաճիւղերը իրաւունք կուտան Պոլսոյ կեդրոնական վարչութեան 122,000 ոսկի կանխավճար ընել պետական գանձարանին՝ ռուսական զինուորական պարտքերի յետ մնացած մասերը վճարելու համար։

—Պոլսոյ պուլկար ներկայացուցիչ Մ. Մարքոֆ ետ կանչուեր է իր կառավարութեան կողմէն։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Կըսուի թէ Եամպոլէն Սոֆիանապոլ տանող երկաթուղոյ գծի վրայ, Կիւսիւլաղաճի քով թուրք և պուլկար զօրքերուն մէջ ընդհարում պատահեր է. թուրք զինուորները յարձակեր են պուլկար զինուորներու պահակին վրայ, ուզելով գրաւել սահմանի վրայ գտնուած բլուր մը, որ պուլկարներուն կը պատկանի. պուլկար զինուորները և զինուած ամբոխը 4 ժամ կռուելով, յետ մղեր են ծակամուտները։ Երկու կողմէն ալ վիրաւորներ ու սպաննուածներ կան։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրգի մէջ ուսանողական խառնակութիւնները վերսկսած են։ Այս անգամ սկսողները եղած են մեքենագործական բարձրագոյն ճեմարանի ուսանողները, իսկ խառնակութեան պատճառն է ճեմարանի վարչութեան խիստ ու անմարդավայել վարմունքը։

Բոլոր ուսանողները արձակուած են և նորէն պիտի ընդունուին նոր հրատարակուած պայմաններու համաձայն։

Միւնոյն անկարգութիւնները տեղի ունեցեր են նաեւ հանքաբանական ճեմարանին մէջ։

—Ռուս կառավարութիւնը մտադիր է մօտերս Թիֆլիզի մէջ հիմնել դրամատուն մը, որ իր ճիւղերը պիտի ունենայ նաեւ Թուրիզի և Պարսկաստանի ուրիշ քաղաքներու մէջ։

Այդ ռուս-պարսկական դրամատան նպատակն է պարսիկ կառավարութիւնէն մենաշնորհումներ ձեռք բերել ու շահագործել։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Ցայտնի է որ Ցունա-Թրքական խաղաղութեան միմիայն սկզբնական պայմանները ընդունուած էին մեծ պետութիւններու միջամտութիւնովը. իսկ իսկական խաղաղութեան պայմանները ըստորագրելու համար Պոլսոյ մէջ կը բանակցին յոյն և Թուրք լիազօրները։ Ինչպէս կերեւի, այդ բանակցութիւնները որեւէ արդիւնք ունեցած չեն։ Թուրք կառավարութիւնը յունական հպատակներու հետ կը վարուի իր «բայաներուն պէս, առանց յարգելու «քաբիթիւլասիօնի» օրէնքները։ Քիոս կղզիի յունահպատակները այն աստիճան նեղդրութեան մը մէջ ինկած են որ տեղւոյն յոյն հիւպատոսը քանիցս խնդրած է իր կառավարութենէն, որ եա կանչէ զինքը, քանի որ անկարող է բան մը ընել ի նպաստ իր պետութեան հպատակներուն։

Վերջին շաբաթներս Քիոսի յոյն հպատակներէն պատգամաւորութիւն մը գացեր է նախարարապետ Զայմիսին, խնդրելու որ զիրենք կամ պաշտպանեն և կամ ուրիշ պետութեան մը խնամոց յանձնեն։

Թուրք կառավարութիւնը յունահպատակներու հետ այնչափ գէշ կը վարուի, որ Աթէնքի կառավարութիւնը մտադիր է յետս կոչել իր լիազօրները և լրջօրէն դիմել մեծ պետութիւններու միջնորդութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ներկայիս կուգամ հրապարակաւ յայտարարել թէ Վառնայ հասած օրէս ի վեր, այստեղ յեղափոխական որեւէ կուսակցութեան հետ ոչ յարաբերութիւն ունեցած եմ և ոչ ալ ունիմ։ Նոյնպէս յեղափոխական և ոչ մէկ պաշտօն չունիմ. և անոնց գործառնութեանցն ալ ոչ հեռուէն և ոչ մօտէն չունիմ և չեմ ունեցած ոեւէ մասնակցութիւն և տեղեկութիւն։

Սարգիս Սուին

ՏՕՔԹՕՐ ԱԼ. ԱԹԱԲԷԿԵԱՆ

Տօքթոր Ալէքսանդր Ատաբէկեան պատիւ ունի յայտնելու հասարակութեան, որ ապրիլ մէկէն հիւանդները կընդունի իր նոր բնակարանի մէջ, Շումինակի փողոց, ոստիկանապետութեան դիմաց։

ԱԶԴ

Հայ հասուն երիտասարդ մը որ գիտէ հաշուապահութիւն, ծանօթ է տաճկերէն եւ գաղղիերէն գրականութեան, կուզէ պաշտօն ստանձնել վաճառատան մը մէջ դիւրամատչելի վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ։

Դիմել խմբագրութեանս։

ԲԱԶՄԱՎԷՊ
Ա. Մ Ս Ա Թ Ե Ր Թ
57րդ Տարի
Տարեկան գին՝ 10 ֆր. — 4 բուպլի. — 2 Տոլար։
Հասցէ՝ Բէտաքսիոն աբ լա որվիւ Բազմավէպ. Ս. Լազար։
Վենիզ (Իթալի)

ՊՕՐՍԱ

Վառնա 27 Մարս

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ 8.80—9.30 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—11 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 6.10—6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 5.75—5.85
Առապա, 55—60 լիպրա, 5.90—6
Կիւնկէ 15—20 վակօն, 25—30 առապա կէլմէքտէ տիր։

ՏԱՐԸ

Կիւնտէ 1—2 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Առապա մուամէլէսի՝ Նարօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.

ժարիմք»ը ըսէ։ Ներսէն այսպէս։ Երբ դրսէն ալ նորադարձը չարուն ակ իրեն վրայ նայող թթու դէմքեր, զինքը բարեւելու չյօժարող հայեր, վերջապէս իր ազգային եսասիրութիւնը չչոյող, չպատուող երեւոյթներ տեսնէ, այն ատեն խեղճը՝ դառնութեամբ լեցուած՝ իր ագիտութեանը մէջ կը փորձուի խորհիլ «Դուք զիս եղբայր չէ՞ք ճանչնար. — եա՛լ ձի՛ղ չեմ ճանչնար»։ Որքա՜ն բնական եւ ազդօրաւ պիտի ըլլար՝ եթէ մեր ոչ-դաւանական բոլոր խնդիրներու ու գործերուն մէջ՝ լուսաւորչականը, բողոքականն ու կաթոլիկը իրենց ձայնն ու բաժինն ունենային։ Փոխադարձ սէր, յարգանք, վստահութիւն, վերջապէս ազգային համերաշխ ոգի մը որքա՜ն պիտի ամրացնէր երեք այլադաւան եղբայրներուն ազգային ներքին կապերը։ Եւ ո՞չ ապաքէն Վահ. Կաթողիկոս Հայրիկն ալ անցեալ տարի նոյն գործակցութիւնը պատուիրեց Ամերիկայի հայ գաղութին։

Գրիգոր Արծրունիի եւ Բաֆֆիի նման լայն հայեացքներու վարժ մարդեր ոեւէ խտրութիւն չդրին լուս., բող. եւ կաթ. հայերուն միջեւ։ Անոնք հայուն փրկութիւնը այլադաւան հայերուն ազգային միութեան մէջ միայն Դը տեսնէին։ Մեր մէջէն որքա՜ն շատեր դեռ պէտք ունին կրկնելու եւ իւրացնելու Բաֆֆիի հետեւեալ տողերուն փրկարար ճշմարտութիւնը. «. . . մենք սիրով կը համբուրենք մեր այն եղբայրներին, առանց դիպչելու նրանց կրօնին, որոնք միայն հայութեան եւ Հայաստանի անունով կը գործեն եւ հայ ազգի շահերը կը պաշտպանեն։ Մենք մէկ ազգի որդիներ ենք, մենք միեւնոյն ընտանիքի զաւակներ ենք։ Կրօնը մի ժամանակ բաժանել էր մեզ, այժմ ազգի ու հայրենիքի սէրը պէտք է միացնէ։ Կաթոլիկութիւնը, բողոքականութիւնը եւ մինչեւ անգամ մահմեդականութիւնը չեն զրկում հային հայ լինելուց. — եւ ոչ էլ լուսաւորչականութիւնը մեզ իրաւունք է տալիս հայ կոչուիլ։ Մենք հայ էինք, երբ հեթանոս էինք, եւ հայ կը մնանք, երբ հազար անգամ կը փոխենք մեր կրօնը»։ (Տաճկահայք, էջ 78.)

Բաֆֆի հայ բողոքականութիւնը շատ մօտէն ճանչնալով՝ չէր կրնար զանիկա միսիոնարութեան հետ չփոթել։ Երբ նա իր «Կայծերի վերջը» յաւելուածին մէջ ամերիկացի միսիոնարները բողոքականներու ձեռքով Հայաստանէն արտաքսել կուտայ, ատկէ աւելի չքնաղ Ջատագովական մը չէր կրնար գծել բող. հայուն զգային ու նաեւ դաւանական անկախ ոգւոյն վրայ։ Եթէ բող. հայերուն ու ամերիկացի միսիոնարներուն միջեւ՝ վարչային խնդիրներու մասին տեղի ունեցած ներքին պայքարներուն տեղեակ ըլլաք, անշուշտ տարբեր պիտի խորհիք ձեր եղբայրներուն վրայ։ Այդ անմարելի պայքարներն որքան ապացոյց են որ օտարը միշտ օտար է, նոյնքան ալ փաստ են որ այդ բողոքականները միշտ հայ են։ Մեր լուս. եղբայրներէն թերեւս չատերը չեն իսկ գիտեր որ Թուրքիոյ դրեթէ բոլոր մեծ քաղաքներուն բող. եկեղեցիներն ու դպրոցները՝ միսիոնարական ազդեցութենէ ու դրամէ բոլորովին անկախ են։ Եւ այս անկախութեան չրջանը պիտի դայնաեւ մեծցեալ բող. եկեղեցիներուն, կամ ինքնօգնութեամբ, կամ քոյր եկեղեցիներու օժանդակութեամբ։ Ցուսով ենք որ չատ չանցած, երբ երկրին անտեսական վիճակը բարւոքի, պիտի իրագործուի Բաֆֆիի գուշակութիւնը, եւ միսիոնարք պիտի ստիպուին Հայաստանէն մեկնիլ, ուրիշ ասպարէզներ փնտռելու համար։

Այս բոլոր խնդիրներուն մէջ ցաւալի կէտ մըն ալ այն է, որ իրարմէ լուր չունինք, եօթնօտար դրացիի աչքով միայն կը դիտենք իրարու գործերը։ Եկ ահա այս անտարբերութիւնն է՝ որ յարաձգուելով, թանձրանալով՝ կրնայ եղբայրութեան յանգիլ։ Մի անգամ ընդ միշտ հասկնալու եւ պէտք ունեցող մեծամասնութեան հասկցնելու ենք, որ դաւանանքի փոփոխութիւնը հայ անհատին հայ արիան մէջ ոչ քիմիական, ոչ ալ հոգեբանական ոեւէ փոփոխութիւն յառաջ չկրնար բերել։ Եթէ այդ անհատը իր ազգութիւնը դրժելու չափ տգիտանայ, մենք դարձեալ դադրելու չենք զայն յուսահատաբար հայ ճանչնալէ։ Մեր կողմէն ցոյց տրուած համակրանքին, եղբայրական սիրոյն հանդէպ այդ անհատը չկրնար բոլորովին անտարբեր մնալ։ Եւ երբ, ինչպէս վերեւ ակնարկուեցաւ, ու կաժէ չնչել, այլադաւան հայերու միջեւ ոչ-դաւանական խնդիրներու մէջ համերաշխութիւն մը գոյացնելու ծրագիր մը գծուի եւ իրագործուի, կերդնում որ մեր ազգային վերածընութեան համար նոր դարագլուխ մը բացուած պիտի ըլլայ։

Փ.

(Մնացեալը յաջորդով)